«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան

պետական համալսարան» հիմնադրամի

գիտական խորհրդի

2020 թվականի հոկտեմբերի 6 թիվ 03 նիստում

Գիտական խորհրդի նախագահ՝ _____ Ն. Ավետիսյան

Հասարակայնության հետ կապերի ընթացակարգ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հասարակայնության հետ կապերի ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) իրավական հիմքերն են «Կրթության մասին» ՀՀ օրենքը, «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրությունը, ՇՊՀ Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) կանոնակարգը և այլ իրավական ակտեր:

1.2 Սույն Ընթացակարգը սահմանում է ՇՊՀ գործունեության լուսաբանման, հասարակական կարծիքի ձևավորման և հետադարձ կապի հաստատման մեխանիզմներն ու գործիքակազմը:

1.3 Սույն ընթացակարգը տարածվում է ՇՊՀ ներքին և արտաքին շահառուների վրա:

1.4 Սույն ընթացակարգը կարող է լրամշակվել կամ փոփոխվել ՇՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:

2. Գործունեության լուսաբանման մեխանիզմները

2.1 ՇՊՀ համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը անցկացվող միջոցառման մասին առնվազն 1 օր առաջ տեղեկացնում է կենտրոնի աշխատակիցներին՝ տրամադրելով համապատասխան տեղեկատվություն տվյալ միջոցառման բնույթի, նպատակի, օրակարգի և կազմակերպիչների մասին:

2.2 Կենտրոնի աշխատակիցները պարտավոր են ՇՊՀ-ում անցկացվող միջոցառումների մասին տեղեկատվական տեքստեր և լուսանկարներ հրապարակել ու տարածել համալսարանի կայքէջում և սոցիալական հարթակներում:

2.3 Հասարակական առավել մեծ հետաքրքրություն ներկայացնող միջոցառումների դեպքում կենտրոնի աշխատակիցները ապահովում են նաև մարզային և հանրապետական լրատվամիջոցների ներկայությունը:

2.4 Առավել մեծամասշտաբ և համահամալսարանական միջոցառումների դեպքում կազմակերպիչ հանդիսացող կառուցվածքային ստորաբաժանումը իրազեկում է կենտրոնի աշխատակիցներին մեկ ամիս առաջ, որպեսզի կենտրոնի մասնագետների օգնությամբ կազմակերպվի առավել արդյունավետ գովազդային արշավ՝ օգտագործելով առավել ընդլայնված PR գործիքակազմ (գովազդային թերթիկների պատրաստում և տեղադրում, գովազդային պաստառների պատրաստում և տպագրություն, տեսանյութերի պատարստում և հեռարձակում, հեռուստառադիո եթերների կազմակերպում, սոցիալական ցանցերում տեղեկատվության տարածում):

2.5 Կենտրոնն իրավունք ունի չլուսաբանել կամ հայեցողությամբ լուսաբանել կազմակերպվող միջոցառումը, եթե տվյալ միջոցառման կամ նախաձեռնության մասին տեղեկատվություն ստանում է միջացառման անցկացման օրը:

2.6 Կենտրոնը համաժամանակյա իրականացվող միջոցառումների միաժամանակ լուսաբանման անհնարինության դեպքում առաջնահերթությունը կարող է տալ այն միջոցառմանը, որի կարևորությունը կընդգծվի կամ կներկայացվի համալսարանի ղեկավարության կողմից:

3.Հասարակական կարծիքի ձևավորման և հետադարձ կապի հաստատման գործիքակազմը

3.1 Կենտրոնի աշխատակիցները սոցիալական ցանցերի հաղորդագրությունների բաժնով ստացած հարցերի պատասխանները ճշտում են համապատասխան բաժնի պատասխանատուներից և արձագանքում նամակագրին կամ ուղղորդում տվյալ ստորաբաժանում:

3.2 Յուրաքանչյուր կիսամյակի ավարտին կենտրոնը հասարակական կարծիքի ուսումնասիրությունն իրականացնում է անանուն հարցաթերթեր և առցանց հարցումների հավելվածներ պատրաստելով:

3.3 Ներքին շահակիցների համար կենտրոնը կիրառում է հարցաթերթիկների տարբերակը, իսկ շահառուների առավել լայն շրջանակի կարծիքի ուսումնասիրությունն իրականացվում է առցանց հավելվածի միջոցով:

3.4 Հարցումների արդյունքում ստացված պատասխաններն համադրելով՝ առանձնացվում են բուհի թույլ և ուժեղ կողմերը: Խնդիր պարունակող հարցերը կենտրոնի աշխատակիցները ներկայացնում են համալսարանի ղեկավարությանը: